*Երկրորդ ընթերցում*
*Նախագիծ*

*Պ-290[1]-11.03.2014-ՏՀ-010/2*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Հոդված 1.* Հայաստանի Հանրապետության *2000* թվականի հուլիսի 6-ի մաքսային օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասում`

«Ծածկագիրն ըստ ԱՏԳ ԱԱ-ի» սյունակի 0713 33 100 տողից հետո աղյուսակը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով`

| | | | |
|---|---|---|---|
| «0714 90 900 | գետնախնձորի սերմացու` թարմ կամ պաղեցրած | 0 | 0» |

*Հոդված 2.* Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական *հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը*.

# ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

**«Կազմակերպությունների եւ անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափ ունեցող եւ ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնցից ավելացված արժեքի հարկը մաքսային մարմինների կողմից չի հաշվարկվում եւ գանձվում» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին և «Հայաստանի հանրապետության մաքսային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի**

| Առաջարկության հեղինակը | Առաջարկության հոդվածը | Առաջարկության բովանդակությունը | Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը |
|---|---|---|---|
| ՀՀ կառավարություն | «Կազմակերպությունների եւ անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափ ունեցող եւ ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնցից ավելացված արժեքի հարկը մաքսային մարմինների կողմից չի հաշվարկվում եւ գանձվում» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդված | Նախագծի 1-ին հոդվածում «պարբերություն» բառը փոխարինել «մասում» բառով: | Ընդունվել է: |
| ՀՀ կառավարություն | Նախագծի 1-ին հոդված | Նախագծի 1-ին և 2-րդ հոդվածների դրույթները միավորել և նախատեսել մեկ հոդվածի տեսքով: | Ընդունվել է:<br>Ելնելով առաջարկության բովանդակությունից, նախագծի 1-ին և 2-րդ հոդվածների դրույթները միավորվել է: |
| ՀՀ կառավարություն | Նախագծի 1-ին հոդված | Նախագծի 1-ին հոդվածում ցանկի 14-րդ տողը նշելու փոխարեն նշել ցանկի այն տողի ծածկագիրը, որից հետո | ԸՆդունվել է:Հոդվածը խմբագրվել է: |

| | | | |
|---|---|---|---|
| | | նախատեսվում է լրացումը | |
| ՀՀ կառավարություն | «Հայաստանի հանրապետության մաքսային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդված | Նախագծի 1-ին հոդվածում «2002» թիվը փոխարինել «2000» թվով: | Ընդունվել է: |
| ՀՀ կառավարություն | Նախագծի 2-րդ հոդված | Նախագծի 2-րդ հոդվածում «հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից» բառերը փոխարինել «հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը» բառերով: | Ընդունվել է: Ելնելով առաջարկությա բովանդակությունից՝ փոփոխության է ենթարկվել նախագծի 2-րդ հոդվածը: |